

# ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՄՈՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1923-2001)



Ալեքսանդր Սիմոնի Մարգարյանը հայ լեզվաբանական մտքի մեծ երախտավորներից էր, գիտության անխոնջ մշակ, հայոց լեզվի ուսուցիչ ու ուսուցչապետ՝ ի վերուստ, ներքին կոչումով ու կանչով վավերացված: Նա ծնվել էր լեզվագիտության, ընդհանրապես գիտության հետախույզ և ուսուցիչ լինելու համար:

Ալեքսանդր Մարգարյանը անցել է գիտության բարձունքների նվաճման ու հաղթանակների արգասավոր մի ուղի՝ ներհուն գիտնականի տքնաջան աշխատանքով:

Ալ. Մարգարյանը ուներ մեծ ներուժ, պրպտուն միտք, լեզվական հագվագյուտ դիտողականություն, հանրագիտարանային գիտելիքներ ու իմացություններ: Այս բոլորը ապահովեցին գիտական, իսկապես որ անմախադեպ մի ժառանգություն՝ բազում-բազմաթիվ հետազոտություններ, հրապարակումներ, հոդվածներ, մենագրություններ, բուհական դասագրքեր ու ձեռնարկներ, բառարաններ, որոնք մեր գիտության ու մշակույթի ոսկե ֆոնդն են անցել:

Նա իր գիտահետազոտական աշխատանքները զուգակցում էր մանկավարժական բեղուն գործունեությամբ, սերունդների հայրենանվեր դաստիարակությամբ, հայոց լեզվի, ընդհանրապես հայոց ազգային արժեքների նկատմամբ ունեցած պաշտամունքային սիրո անդաժաման զգացումով:

Նա հեղինակել է շուրջ երկու տասնյակ մենագրություններ և հարյուրից ավելի հոդվածներ՝ տպագրված գիտական այլևայլ պարբերականներում ու ժողովածուներում:

Անչափ լայն էին նրա հետազոտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան զբաղեցրել են հայոց լեզվի բոլոր մակարդակների իրողություններն ու իրակությունները, հայ լեզվաբանության պատմությունը, բարբառագիտությունը, ժամանակակից հայերենի հնչյունական համակարգը, բառապաշարը, դարձվածաբանությունը, բառարանագրությունը, քերականական կառուցվածքը, մասնավորապես ձևաբանությունը՝ իր

պատմական զարգացմամբ ու ներկայիս համակարգային կառուցվածքով:

Ուշագրավ են և պատմական որոշակի արժեք են ներկայացնում նրա՝ հայերենի բազմաթիվ արմատների, բառերի, բառածևերի, բառաբաղադրությունների ստուգաբանությունները, որոնք շատ կողմերով ճշգրտում են հատկապես Յրաչյա Աճառյանի ու Պևորգ Ջահուկյանի մեկնությունները կամ նորովի մեկնաբանում համապատասխան իրողությունները:

Ալ. Մարգարյանի «Արդի հայերենի կապերը», «Միքայել Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը», «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը», «Հայերենի հարադիր բայերը», «Գորիսի բարբառը», «Հայոց լեզվի հապավումները», «Հայոց լեզվի հապավումների բառարանը», «Հայերենի հոլովները» և շատ այլ աշխատություններ շարադրված են անցյալի հայ ավանդական քերականագիտական լավագույն ավանդույթների և լեզվաբանական ժամանակակից հայտնագործությունների ու նվաճումների հաշվառմամբ, դրանց լույսի ներքո:

Դրանցից շատերը ծանրակշիռ գործեր են, գիտական մնայուն արժեքներ, որ հայտնի չափով նպաստել են հայ լեզվաբանական մտքի առաջընթացին:

Սակայն կուզենայինք հատկապես առանձնացնել Ալ. Մարգարյանի վերջին տարիների ուսումնասիրությունների արդյունքները՝ բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և դասախոսների համար նախատեսված՝ հայոց լեզվի չորս ձեռնարկները՝ «Ժամանակակից հայոց լեզու. բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն» (Եր., 1990, 406 էջ), «Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն» (Եր., 1993, 232 էջ), «Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն» (Եր., 1997, 252 էջ) և վերջապես՝ «Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն» (Եր., 2004, 625 էջ, հետմահու):

Թեև հեղինակը այս չորս գրքերից յուրաքանչյուրի հանձնարարականում անվանաթերթի վրա, համեստորեն նշում է, որ ինքը ներկայացնում է ընդամենը «ուսումնասիրական ձեռնարկ՝ բուհերի բանասիրական ֆակուլտետների համար», սակայն դրանք, այդպիսին լինելու հետ մեկտեղ, ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության և ձևաբանության ամենամշակակալից ուսումնասիրություններից են: Դրանց գիտական արժեքն ու նշանակությունը դուրս են գալիս ձեռնարկի, անգամ դասագրքի նեղ շրջանակներից և անվերապահորեն ազդարարում հայ լեզվաբանական հետազոտությունների որոշակի առաջընթացը, միաժամանակ հիմք ու խարիսխ դառնում նորանոր դիտարկումների և ուսումնասիրությունների համար:

Ճիշտ է, ժամանակակից հայոց լեզվի և նրա քերականության այդ բաժինները մշտապես եղել են հայ և օտար լեզվաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում, և, սկսած 19-րդ դարի 60-70-ական թվականներից, ստեղծվել են բազմաթիվ մեծարժեք գործեր, որոնցում լայնորեն լուսաբանվել են հայերենի համակարգային համապատասխան իրողությունները, օրինաչափությունները, ուստի առերևույթ թվում էր, թե արդեն ամեն ինչ ասված է: Սակայն լեզվաբանի հիշյալ աշխատությունները գալիս էին ապացուցելու, որ նախկինում շատ բան իսկապես այնպես չէր ասված,

ինչպես որ պետք էր, տակավին չլուսաբանված շատ ու շատ իրողություններ կային, վիճահարույց մեկնություններ, որոնք ակնկալում էին նորովի դիտարկումներ, նոր քննություն, նոր խոսք, նոր ընդհանրացումներ, ինչն էլ կատարել է Ալ. Մարգարյանը:

Ձեռնարկներից վերջինը, որը, ցավոք, հեղինակին բախտ չվիճակվեց տեսնելու տպագրված, արդի հայերենի ձևաբանության ուսումնասիրությանը նվիրված, աշխատությունների շարքում լավագույններից է, եթե չասենք՝ լավագույնը, հիրավի եզակի, կոթողային մի աշխատություն՝ հայ քերականագիտական մտքի բազմադարյան պատմության մեջ:

Նրանում անխտիր բոլոր հիմնախնդիրները՝ խոսքի մասերի դասակարգման հիմունքը, յուրաքանչյուր խոսքի մասի բառաքերականական առանձնահատկությունները՝ բառակազմական, ձևակազմական, կիրառական, զուգորդական օրինաչափությունները, ինչպես որ ընդունված է ընդհանուր լեզվաբանության մեջ, դիտարկված են երկու հայեցակետով՝ ա. տարածամանակյա (դիախրոնիկ) և բ. համաժամանակյա (սինխրոնիկ): Տարածամանակյա քննությամբ ամեն մի առանձին խոսքի մաս ներկայացված է պատմական ակնարկով՝ սկսած Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության հայ թարգմանիչներից ու մեկնիչներից մինչև Ստեփան Պալասանյան ու Մանուկ Աբեղյան, ապա նաև՝ մինչև նոր ժամանակները:

Այստեղ ամենայն մանրակրկիտությամբ քննված ու լուսաբանված են հայոց լեզվի ձևաբանական իրողությունների, կարգերի ու համակարգերի՝ դարերի հոլովություն կրած փոփոխությունները, տեղաշարժերը, հին շատ ձևերի կորստյան ու անհետացման պատճառները, նոր ձևերի ու իրողությունների գոյացման ուղիները, լեզվական ավանդության ու ավանդախախտության ողջ պատմությունը:

Համաժամանակյա տեսանկյունով, կարելի է ասել, սպառնիչ ցուցադրված են արդի հայերենի խոսքի մասերի իմաստային խմբերը, յուրաքանչյուր խոսքի մասի սեռային կամ ընդհանրական կարգերը, համակարգային կամ հակահամակարգային արտահայտություններն ու զարգացման միտումները:

Խորհրդային Միության փլուզումից հետո՝ մեր կյանքի մասնավորապես այս վերջին տարիներին, երբ գիտությունն ու գիտնականը, ընդհանրապես մտավորականը օտարված են եղել հասարակությունից, ինչպես որ հարկն է չեն վայելել պետության հովանավորությունն ու հոգատարությունը, գիրք գրելը եղել է խիզախություն, իսկ այսպիսի՝ գիրք գրելը ավելին էր, քան խիզախությունը: Դա գիտական սխրագործություն էր, որ կատարել է Ալ. Մարգարյանը, իսկական սխրագործություն գիտության բնագավառում:

Ալ. Մարգարյանը մինչև իր կյանքի վերջին օրերը անմնացորդ նվիրումով ծառայեց հայագիտությանը, եղավ հայոց լեզվի սիրված ուսուցիչ՝ բառիս լավագույն ու բարձրագույն նշանակությամբ, քանի՛-քանի՛ սերունդների դաստիարակ: Նա, անշուշտ, պարզևներ շատ է ստացել: Բայց ամենամեծ պարզևը, անկասկած, այն անհուն, սրտաբուխ ու անկաշառ սերն էր, որ վայելում էր նա իրեն ճանաչողների, հատկապես ուսանողներ-

րի, իր ընկերների, բարեկամների ու գործընկերների շրջանում:

Թեև այսօր Ալ. Մարգարյանը մեզ հետ չէ, բայց նրա հոգին, նրա գիտական ժառանգությունը կենդանի է, ապրում է ու նպաստում հայ լեզվաբանական գիտության ու մտքի առաջընթացին:

**ԱՐՏԱՇԵՍ ՊԱՊՈՅԱՆ**

**Խմբագրության կողմից** – Պրոֆ. Ալեքսանդր Մարգարյանը՝ որպես արգասավոր գրչի տեր գիտնական, «Բանբերում» տպագրել է տասնյոթ հոդված, որոնցից առաջինը լույս է տեսել 1971 թ. № 2-ում, իսկ վերջինը՝ մահվանից մեկ տարի առաջ՝ 2000 թ. № 1-ում: Ավելին, նրա գրքերից երկուսի մասին «Բանբերում» տպագրվել է դրվատալից գրախոսություն, ընդ որում՝ մեկը 1967 թ. № 2-ում, իսկ մյուսը՝ հետմահու՝ 2005 թ. № 2-ում:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...